ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N3 -Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 22-ի հերթական նիստի օրակարգը:

1.Արուճ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի չորրորդ եռամսյակի կատարողականի վերաբերյալ:

2.Արուճ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրով 2019 թվականին կատարվող աշխատանքների վերաբերյալ:

3. Արուճ համայնքի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ:

4.Արուճ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:

5.Արուճ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու վերաբերյալ:

6.Արուճ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 37 որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մարտին Այվազյան

2.Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Գեղամ Կարապետյան

Արուճ համայնքի ղեկավար Բ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N 4-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և<<Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

Արուճ համայնքի ավագանին որոշեց՝

1.Հավանություն տալ Արուճ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման հաշվետվությանը՝ համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արագածոտն մարզի Արուճ համայնքի ավագանու

2019 թվականի հունվարի 22-ի թիվ 4-Ա որոշման

Արուճ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի չորրորդ եռամսյակի կատարողականի ընթացքը.

| ԲՅՈՒՋԵ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ | ՏՈԿՈՍ |
|---|---|---|
| Հողի հարկ- 1155,0 | 869.2 | 75,2% |
| Փոխադրամիջոց-773,0 | 1405.0 | 181.8% |
| Շինություն - 62,5 | 65.2 | 104.3% |
| Հողի վարձավճար-421,7 | 498.1 | 118.1% |
| Այլ եկամուտ -440,0 | 722.2 | 164.1% |
| Տեղական տուրք- 22,0 | 34.5 | 156.8% |
| Աղբահանության վճար-200.2 | 211.4 | 105.6% |
| Դոտացիա - 4858,2 | 4858,2 | 100% |

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 թվական N5-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով և 82-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրով 2019 թվականին կատարվող աշխատանքները՝ համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Տիգրան Ավետիսյան

2.Երվանդ Մանուկյան

3.Գեղամ Կարապետյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Մարտին Այվազյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզ Արուճ

համայնքի ավագանու 201 9 թվականի

22 հունվարի թիվ 5-Ա որոշման

2019 թվականին հնգամյա ծրագրով նախատեսվում է կատարել.

1.2019 թվականին Արուճ համայնքի գյուղամիջյան փողոցների լուսավորում՝2500,0 հազար դրամ:

2.2020 թվականին Արուճ համայնքի ճանապարհների վերանորուգում ՝3000,0 հազար դրամ:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N 6-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի18-րդ ենթակետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Արուճի համայնքում սահմանել տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Տիգրան Ավետիսյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Մարտին Այվազյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Արում համայնքի ավագանու 2019

թվականի 22 հունվարի N6-Ա որոշման

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների/ ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրք սահմանել.

1.1 Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի ,այդ թվում՝ այգեգործական տների,ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական , և արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ մինչև 10000 դրամ:

1.2Ոչ հիմնական շինությունների համար մինչև 20քմ և 20քմ-ից ավել ընդհանուր մակերես ունեցող տարածքների համար սահմանել 10000 դրամ:

1.3Համայնքի վարչական սահմանում շենքերի,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար սահմանել 5000 դրամ:

2. Համայնքի տարածքում տեղական տուրք է սահմանվում՝

2.1 Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար.

2.2 Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝1000 դրամ:

2.3 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝3500դրամ:

3.Ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար.

3.1 Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝1000 դրամ:

3.2 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝3500դրամ:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Տիգրան Ավետիսյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Մարտին Այվազյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արում համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N7-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 11-րդ կետով ,«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Արուճ համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 240000 դրամ/երկու հարյուր քառասուն հազար /:

2.Արուճ ի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատել ՝ համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Տիգրան Ավետիսյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Մարտին Այվազյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ համայնքի

ավագանու 2019թ հունվարի 22-ի N 7-Ա որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը -12

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը -11.5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 240000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 130000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 185000 |
| Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 150000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 135000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 135000 |
| Կուլտուրայի տան տնօրեն | 1 | 72752 |
| Գրադարանավար | 1 | 72752 |
| Պահակ/կուլ.տուն,մանկապարտեզ/ | 1 | 77905 |
| Անասնաբույժ/պայմանագրային/ | 0.5 | 36376 |
| Ընդամենը /ամսեկան/ | 9,5 | 1234785 |
| Սպասարկող անձնակազմ/ինքնաֆինանսավորում/ | | |
| Խմելու ջրի ներքին ցանցի սպասարկող | 2 | 179502 |
| Ընդամենը /ամսեկան/ | 11.5 | 1414287 |

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Երվանդ Մանուկյան

2.Կորյուն Հովհաննիսյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Մարտին Այվազյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N8-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արուճ համայնքի հնգամյա ծրագիրը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով.

Համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել Արուճ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն `համաձայն հավելվածի:/1-6/

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Տիգրան Ավետիսյան

2 .Երվանդ Մանուկյան

3. Մարտին Այվազյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արագածոտն մարզի Արուճ համայնքի ավագանու
2019 թվականի հունվարի 22-ի թիվ 8-Ա որոշման

Արուճ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի եկամտային և ծախսային հոդվածները`

1.ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | հազար դրամ |
|---|---|
| Հողի հարկ – | 4400.0 |
| Գույքահարկ- | 3769.0 |
| Փոխադրամիջոց- | 3486.0 |
| Շինություն - | 283.0 |
| Տեղական վճար- | 800.0 |
| Տեղական տուրք- | 88.0 |
| Հողի վարձակալություն- | 1687.0 |
| Այլ եկամուտ- | 3400.0 |
| Դոտացիա- | 19446.6 |
| Ընդամենը եկամուտներ | 33590.6 |

2.ԾԱԽՍԵՐ

| | |
|---|---|
| Աշխատավարձ - | 18000.0 |
| Պարգևատրում- | 980.0 |
| Վառելիք և էներգետիկ ծառայություններ- | 1000.0 |
| Ջրմուղ և կոմունալ ծառայություններ- | 3200.0 |
| Կապի ծառայություններ- | 200.0 |
| Գործուղում - | 100.0 |
| Ապահովագրական ծախսեր- | 50.0 |
| Համակարգչային ծառայություններ- | 250.0 |
| Տեղեկատվական ծառայություններ- | 150.0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ- | 400.0 |
| Մասնագիտական ծառայություններ- | 600.0 |
| Գրասենյակային նյութեր- | 300.0 |
| Տրանսպորտային նյութեր- | 450.0 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում _ | 500.0 |
| Կառավարչական ծախսեր- | 300.0 |

| | |
|---|---|
| Գույքի վարձակալության վարձ- | 800,0 |
| Շենքերի և կառույցների ընթ. նորոգում- | 1200.0 |
| Ներկայացուցչական ծախսեր- | 100.0 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր - | 50.0 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր- | 50.0 |
| Սոցիալական հատուկ արտոնություններ /երեխայի ծննդյան ,վիրահատության,վթարներ,անապահով ընտանիքների, մահվան դեպքում/- | 2000.0 |
| Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմ.- | 100.0 |
| Պարտադիր ծախսեր- | 100.0 |
| Այլ ծախսեր | 2050.6 |
| Ընդամենը ծախսեր | 31080.0 |

3.ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԳԾՈՎ ՄՈՒՏՔԵՐ

| | |
|---|---|
| Հողի օտարումից մուտք | 1347.1 |

4.ԾԱԽՍԱՅԻ Ն ՄԱՍ

| | |
|---|---|
| Վարչական սարքավորումներ- | 3000.0 |
| Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում- | 8960.0 |

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒՆՎԱՐ 2019 ԹՎԱԿԱՆ N9-Ա

# ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 37 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով.

Արուճ համայնքի ավագանին որոշեց՝

Արուճ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 37 որոշումը ճանաչել անվավեր :

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան